ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/67

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Մասնակից՝ «Գոլդ Նեթ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ռաֆֆու անվան թիվ 19 հիմնական դպրոցի մեկ մասնաշենքի վերակառուցում մանկապարտեզի» աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 03.03.2020թ.-ի թիվ 26/26-1/3225-2020 գրությամբ «Գոլդ Նեթ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 28.02.2020թ.-ի թիվ Ե/01/356-20 գրության հիման վրա, 03.03.2020թ.-ին «Գոլդ Նեթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 03.03.2020թ.-ին:

04.03.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/67 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

11.03.2020թ.-ին ու 02.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 11.03.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 02.04.2020թ.-ին:

2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ-ն 28.02.2020թ.-ի թիվ Ե/01/356-20 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) կողմից 2019 թվականի դեկտեմբերի 20-ին հրապարակվել է շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական վերահսկողության ծառայությունների թիվ ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/15 ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերը, որի հայտերի բացումը տեղի է ունեցել 2019 թվականի դեկտեմբերի 27-ին: Հայտերի բացման նիստի արդյունքում, համաձայն ներկայացված գնային առաջարկների, 1-ին տեղը զբաղեցրել է «Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ մասնակից): Ս.թ. փետրվարի 6-ի Գնահատող

հանձնաժողովի որոշման համաձայն 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը գնահատվել է բավարար և «Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ն հայտարարվել է ընտրված մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետի ավարտից հետո՝ ս.թ. փետրվարի 17-ին, ընտրված մասնակցին ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Ս.թ. փետրվարի 18-ին «Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ից ստացվել է պատասխան գրություն, որով ընկերությունը հրաժարվում է պայմանագիր կնքելուց:

Հաշվի առնելով վերոգրյալը, և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ խնդրում ենք Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը սահմանված կարգով գործին ընթացք տալու համար:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/15» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Գոլդ Նեթ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Գոլդ Նեթ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 04.03.2020թ.-ին գրությամբ դիմել է «Գոլդ Նեթ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.03.2020թ.-ի թիվ 26/26-1/3225-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում՝ չներկայանալով նաև հրավիրված նիստին:

4. <u>ՍՑ-LO-2020/67 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ռաֆֆու անվան թիվ 19 հիմնական դպրոցի մեկ մասնաշենքի վերակառուցում մանկապարտեզի» աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով 20.12.2019թ.-ին հայտարարվել է «ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Գոլդ Նեթ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 06.02.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Գոլդ Նեթ» ՍՊԸ-ն գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

07.02.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

Պատվիրատուն 17.02.2020թ.-ին էլեկտրոնային տարբերակով ծանուցել է Մասնակցին և հայտնել է, որ Armeps համակարգով «Գոլդ Նեթ» ՍՊԸ-ին ուղարկվել է «ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/15» ծածկագրով պայմանագրի շնորհումը և պայմանագրի նախագիծը՝ խնդրելով կնքել պայանագիրը և երկու օրինակից ներկայացնել Հայասաանի տարածքային զարգացման հիմնադրամին՝ վերջինիս տնօրենին ուղղված կից գրությունով, ինչպես նաև որակավորման ապահովում շինարարական աշխատանքի գնման համար սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով նախատեսված արժեքի 10 տոկոսի չափով /շինարարական աշխատանքի նախատեսված արժեքը կազմում է 112,323,410 ՀՀ դրամ/ և պայմանագրի ապահովում, որը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը: Ընդ որում, որակավորման ապահովումն անհրաժեշտ է ներկայացնել բանկային երաշխիքի տեսքով, իսկ պայմանագրի կատարման ապահովումը՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (հավելված 5.1) կամ կանխիկ փողի ձևով, սույն ծանուցումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ նաև պայմանագրում լրացնել ռեկվիզիտները:

Ի պատասխան վերոնշյալ ծանուցման, «Գոլդ Նեթ» ՍՊԸ-ն 18.02.2020թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ չեն կարող կնքել «ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/15» ծածկագրով պայմանագիրը, քանի որ ոչ բավարար միջոցներից ելնելով չեն կարող

ներդնել սահմանված կարգով որակավորման ապահովման համար նախագծային փաստաթղթերով նախատեսված արծեքի 10 տոկոսի չափով գումար:

Հանձնաժողովի 21.02.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 18.02.2020թ.-ին «Գոլդ Նեթ» ՍՊԸ-ից ստացված գրության համաձայն վերջինս հրաժարվում է պայմանագիր կնքելուց:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.03.2020թ.-ի թիվ 26/26-1/3225-2020 գրությամբ «Գոլդ Նեթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ռաֆֆու անվան թիվ 19 հիմնական դպրոցի մեկ մասնաշենքի վերակառուցում մանկապարտեզի» աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով 20.12.2019թ.-ին հայտարարված «ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Գոլդ Նեթ» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 06.02.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից, ինչով պայմանավորված 07.02.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

Պատվիրատուն 17.02.2020թ.-ին էլեկտրոնային տարբերակով ծանուցել է Մասնակցին և հայտնել է, որ Armeps համակարգով «Գոլդ Նեթ» ՍՊԸ-ին ուղարկվել է «ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/15» ծածկագրով պայմանագրի շնորհումը և պայմանագրի նախագիծը՝ խնդրելով կնքել պայանագիրը և երկու օրինակից ներկայացնել Հայասաանի տարածքային զարգացման հիմնադրամին՝ վերջինիս տնօրենին ուղղված կից գրությունով, ինչպես նաև որակավորման ապահովում շինարարական աշխատանքի գնման համար սահմանված

կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով նախատեսված արժեքի 10 տոկոսի չափով /շինարարական աշխատանքի նախատեսված արժեքը կազմում է 112,323,410 ՀՀ դրամ/ և պայմանագրի ապահովում, որը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը: Ընդ որում, որակավորման ապահովումն անհրաժեշտ է ներկայացնել բանկային երաշխիքի տեսքով, իսկ պայմանագրի կատարման ապահովումը՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (հավելված 5.1) կամ կանխիկ փողի ձևով, սույն ծանուցումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ նաև պայմանագրում լրացնել ռեկվիզիտները:

Ի պատասխան վերոնշյալ ծանուցման, «Գոլդ Նեթ» ՍՊԸ-ն 18.02.2020թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ չեն կարող կնքել «ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/15» ծածկագրով պայմանագիրը, քանի որ ոչ բավարար միջոցներից ելնելով չեն կարող ներդնել սահմանված կարգով որակավորման ապահովման համար նախագծային փաստաթղթերով նախատեսված արծեքի 10 տոկոսի չափով գումար:

Հանձնաժողովի 21.02.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 18.02.2020թ.-ին «Գոլդ Նեթ» ՍՊԸ-ից ստացված գրության համաձայն վերջինս հրաժարվում է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գոլդ Նեթ» ՍՊԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.03.2020թ.-ի թիվ 26/26-1/3225-2020 գրությամբ «Գոլդ Նեթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/67 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Գոլդ Նեթ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

3. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ